էլ քիւրդերի վերջին շարժումն էր, երբ նրանք շտապեցին օգնել Թիւրքաց զօրքերին Բայազէդը պաշարելու ժամանակ: Նշանաւոր է այն հանգամանքը, որ այդ անգամ քիւրդերը իրանց բաժանումից յետոյ առաջին անգամ միացան Թիւրքերի հետ: Այժմ աւելորդ կը լինէր մեկնել Թիւրքաց և պարսից քիւրդերի միանալու պատճառները: Կարելի է յիշել միայն, որ պարսից քաջ քիւրդերի միանալը միւս քիւրդերի հետ բաւական երկարացրեց Բայազէդի պաշարումը:

Արդեօք Թիւրքահպատակ Փիբօդի, Ռեմինգտօնի և Մարտինիի հրացաններով զինուորված քիւրդերի յարձակմունքը Պարսկաստանի վրա, նրանց միանալը պարսից քիւրդերի հետ մի այլ բնաւորութիւն չունի, քան թէ մի արշաւանք կողոպտելու դիտաւորութեամբ: Արդեօք այս ենթադրութիւնը չէ ապացուցանվում նրանով, որ քիւրդերը գրաւեցին բոլոր տեղերը Բանէից, Սակիզից և Լայջանից մինչև Սուջբուլաղ, Ուրմիա, Խօյ և Մարաղայի շրջակաները, որ Սուջբուլաղի նահանգապետը փախաւ 300 ձիաւորների հետ, իսկ իր տեղը թողեց քիւրդերին կողոպտելու համար:

Քիւրդերի արշաւանքը Պարսկաստանի վրա չէ կարելի պատահական համարել: Ուրեմն ի՞նչով մեկնենք այդ շարժումը:

Ալբանական միութեան գոյութեանը 1878 Թւականին ոչ ոք չէր հաւատում: Մինչդեռ այդ միութիւնը Եւրօպայի աչքի առջև նրա կամքի հակառակ ուղղութիւն տուեց Բալկանեան Թերակղզու բոլոր գործերին: Այդ միութեան հետ գործ ունեն և կունենան եւրօպական պետութիւնների ներկայացուցիչները: Քանի որ ճանաչված ալբանական միութիւն կայ ինչի՞ չենթադրել, որ կազմվում է քիւրդական միութիւն: Արա մասին եւրօպական մամուլը արդէն ակնարկել է: Արտասահմանեան լրագիրների մէջ խօսվեցաւ քիւրդերի անբաւականութեան մասին իրանց կառավարութեանից, նեստորականների անբաւականութեան մասին, որոնք իբր թէ ցանկանում են միանալ քիւրդերի հետ, խօսվեցաւ հայերի անբաւականութեան մասին և վերջապէս քիւրդական միութեան կազմվելու մասին: Մինչև անգամ այսպիսի անկարգութիւնները մեզ պէտք է հետաքրքրեն: Մեր սահմանների երկարութեամբ, սկսած Փոքր-Ասիայից, Արտվինից մինչև Ջուլֆա հարևան ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմված է գլխաւորապէս Թիւրքահպատակ և պարսկահպատակ զանազան քիւրդ ցեղերից: Պարսկաստանի հարաւարևմտեան մասը Խօյից մինչև Մագու և քիւրդերի գրաւած տեղերից դէպի արևելք մինչև Կիրմանշահ բնակեցրած է քիւրդ ցեղերով: Վերջապէս մինչև Բելուջիստանի և Սէյստանի սահմանները պարսկական երկրների զանազան տեղերում բնակվում են քիւրդեր, բախտիարներ, որոնք մոլեռանդ սիւննի մահմեդականներ են, ուրեմն շիա պարսիկների կրօնական անհաշտ թշնամիներ: Շահի իշխանութիւնը թափառական այդ ցեղերի վրա չափազանց թոյլ է և այդ հանգամանքը լաւ յայտնի է Թիւրքաց կառավարութեանը:

Ե. Դրան մինիստրները թէպէտ անպատրաստ մարդիկ են, բայց այնու ամենայնիւ իրանց գործը այնքան աջողութեամբ են կատարում, որ կարողանում են ընդդիմադրել Եւրօպային: Անկարելի է մերժել Թիւրքաց մինիստրների ընդունակութիւնները, քանի որ եւրօպական դիպլօմատիան չէ կարողանում նրանց յաղթել: Խոստովանելով, որ Թիւրքաց կայսրութիւնը իր այժմեան կազմակերպութեամբ անկարող կը լինի գոյութիւն ունենալ Բալկանեան Թերակղզու վրա, գիտենալով, որ այդ երկիրը վաղ թէ ուշ ուրիշներին պէտք է մնայ, արդեօք Թիւրքիայի գործիչները հարկաւոր չը համարեցին իրանց համար տեղ պատրաստել և Փոքր-Ասիային տիրապետելու համար: Կամենալով յետ քաշվել դէպի այն երկիրները, որտեղից եկել են իրանց նախնիքները, այդ շարժման առաջնորդները չէին կարող չը մտաբերել իրանց պատմական աւանդութիւնը և չը ցանկանալ վերականգնել իրանց նախկին հզօր տիրապետութիւնը Փոքր-Ասիայից մինչև Սև ծովը, Հնդկաստանը և Կաշգարը: Այդ միտքը իրագործելու համար բաւական էր միջոց տալ քիւրդերին յարձակվել Պարսկաստանի վրա, որ տուրանական և իրանական տարրերի մէջ պատերազմ ծագէր: Շիա կրօնի Պարսկաստանը սիւննի ժողովուրդների մէջ տեղն է գտնվում և ի հարկէ հեշտութեամբ կը կլանվի աւելի ուժեղ և լաւ պատրաստված թշնամուց: Եթէ սիւննիների շարժումը աջողութիւն ունեցաւ, նրանց կրօնակիցները գլուխ կը բարձրացնեն Պարսկաստանի միւս կողմից ու այս դէպքում ո՞վ գիտէ ի՞նչ հետևանք կունենայ քիւրդական շարժումը:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Վաղարշակերտ, 7 Նոյեմբերի

Ամսոյս 4-ին Խիզեր էր, ուր աչքի էին ընկնում մի բազմութիւն հազար տան չափ. այդ ողորմելիներ Վանայ շրջականերիցն են, որոնք այլ ևս հնար չունենալով մի կտոր հաց հայթայթել մեռնելից ազատելու իրանց ընտանեաց կեանքը, օր առաջ լցվել են Սուրմալի, ապաւինելով հայ գիւղացիների օգնութեան: Զարմանալի է Կարնոյ հիւպատոս Օբէր-Միլլէրի ընթացքը. նրանք որոնք ուրանում են Հայաստանում եղած սովի գոյութիւնը, հրաւիրում եմ Սուրմալուի գաւառականատես լինելու հայ սովատանջների թշուառութեանց: Ես հրաժարվում եմ դրանց աղէտները նկարագրել, դրանք նկարագրելու սահմանից դուրս են եկել: Հետաքրքրելի էր տեսնել Իգդիրցի մեծահարուստ պ. Թովմասեան Սանիմաննոս քահանային, որի համար «Մշակի» 52 համարում հրատարակված էր, իբր թէ Վանայ սովածներին 1000 ր. է խոստացել. խղճութեան գալով, տէր քահանան և ոչ անգամ երազել է դրա նման մի բան: Իգդիրցիք թող ուրախ լինեն որ այդպիսի անձինքներից գոնէ մնաս չը կրեն հասարակական գործերի նկատմամբ: Ցիչեալ քահանան Երուանդակերտի և Կաղզուան բերդի հնութեանց սրբատաշ քարերը քանդելով Իգդիրում իր համար ջրաղաց է շինել: Իգդիրի երկսեռ ուսումնարանները բաւական բարեկարգ դրութեան մէջ են. վարժապետներ դասական պարապմունքներից զատ, պատրաստվում են մարզական գործերին նպաստելու մասին ներկայացումներ տալ: Գաւառապետ պ. Ն. Գեօղչայեան գրաւել է բոլոր ազգաբնակութեանց յարգանաց համակրութիւնը: Պ. գաւառապետը այցելեց ուսումնարաններին և խրախուսեց:

Այսպիսի մխիթարական տեսարաններ յետոյ թողած անցկացայ սահմանը, որտեղ վիճակը այստեղ բոլորովին փոխվեցին, կարծես Մասիսի հարաւային ստորոտը անդադար ցնցվում է ամեն օր, ամեն տեղ յարձակմունք, ամեն տեղ բռնութիւնք:

Հոկտեմբերի 22-ին Նախիկցի Խալիֆայ չէյխի հայատարանցի, գիլանցի, ճալալցի և սեպկեցի ցեղերի գլխաւորներին ժողովում է, նրանց հաղորդելու համար Շէյխ-Իբրահիմլուի հրաւէրը: Քուրդ ցեղապետներ մերժում են Պարսկաստանի արշաւանքին մասնակցել, ի նկատի առնելով հայոց շարժումը, բայց և այնպէս այդ ժողովում վճռում են հայոց գիւղերի վրա յարձակմունքներ անել: Հոկտեմբերի 27-ին մի քրդական հրոսակ գիշերով յարձակվում է հայաբնակ Ամատ գիւղի վրա, գիւղացիք, թէ կանայք և թէ տղամարդիկ ամբողջ գիշեր կռւում են հրացանների և սրերի դէմ բահով, բրիչով և այլ երկրագործական գործիքներով և կատարելապէս պաշտպանում են գիւղը յափշտակողներից. չը նայած որ Ամատ գիւղը գտնվում է Թօփրաք-Քալէից 7 վերստ հեռաւորութեան վրա, ուր նստում է փաշան, Թիւրքերը ոչ մի օգնութիւն չեն տալիս գիւղացոց: Կառավարութիւնը փոխանակ այսպիսի անկարգութեան առաջն առնելու, գրգռում է քրդերի կրօնամոլութիւնը: Եւ այդպէս Բայազէդի մութեսարիֆը արքունական հարկը ժողովելու և երկիրը պաշտպանելու պատրւակով շրջագայում է գաւառներ, բայց նորա ճանապարհորդութեան բուն նշանակութիւնը քրդերին միաւորել և գրգռելն է:

Շատ ողորմելի է Մուշանցոց վիճակը: Այս ամառ Մակուայ խանութեան հպատակ քրդեր ամբողջ գիւղի ոչխար և տաւարը քշել տարել էին, Թիւրք կառավարութիւնը ոչինչ պաշտպանութիւն ցոյց չը տուեց նաև սահմանակից տէրութեան աւազակների դէմ. հայատարանցի քրդերը տեսնելով որ իրանց հարևան հայերի գոյքը օտարները յափշտակեցին, յաղթեցին պարսկահպատակ քրդերին և այդ անտէր աւարը իրանց սեփականութիւն շինեցին: Այստեղ ով որ ուժ ունի, իրաւունքը նրանն է:

Մագնի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 Նոյեմբերի: Երէկ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը ուղևորվեցաւ Լիվադիա: Կոմս Լօրիս-Մելիքօվին Պետերբուրգի մէջ սպասում են Նոյեմբերի 22-ին: Դեսպան Նօվիկօվ հասաւ Օդէսսա Նոյեմբերի 11-ին, իսկ 14 կուղևորվի Կ. Պօլիս:

Կ. ՊՕԼԻՍ, 13 Նոյեմբերի: Հասուն տեղեկացրեց Հռօմից, որ հրաժարվում է հայկաթօլիկների պատրիարքի պաշտօնից: Երևի նրան կը փոխարինէ Ազարեան:

ՎԻԷՆՆԱ, 14 Նոյեմբերի: ,,Polit. Corresp.'' լրագիրը հաղորդում է, որ Դուլցինիօի չեռնօգօրցիներին յանձնելու գործը սկսված է: Պօպօվիչ նշանակված է Դուլցինիօի նահանգապետ:

ԱԹԷՆՔ, 14 Նոյեմբերի: Կումունդուրօսի մինիստրութիւնը հրաժարական տուեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 Նոյեմբերի: Պաշտօնապէս հաղորդված է, որ Կազանի նահանգապետ Սկարեատին արձակված է պաշտօնից իր խնդիրքի համեմատ:

ԴՈՒԲԼԻՆ, 14 Նոյեմբերի: Պարնելի և նրա ընկերների դատը նշանակված է դեկտեմբերի 16-ին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 Նոյեմբերի: Երէկ մինիստր Աբազա ընդունեց իրան յանձնված բաժնի մէջ ծառայողներին: Մինիստրը վերկացեց ռուսաց ֆինանսների վատ դրութիւնը և յոյս յայտնեց այդ դժուարութիւնների առաջն առնել:

ՑԵՏԻՆԻ, 15 Նոյեմբերի: Դուլցինիօի գրաւելը սկսվեց երէկ կէս օրին և երեկոյեան վեց ժամին թէ քաղաքի և թէ շրջակայ գիւղերի գրաւելը վերջացաւ:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

կար պատանել չէ հարկաւոր: Գիտենք, որ կեանքի բոլոր երևոյթները մէկը միւսի հետ սերտ կապված են, և այդ պատճառով յոյս ունենք, որ կարելի է միջոցներ գտնել կեանքը բարեկարգելու, նախ և առաջ ազդելով մի կողմի վրա այն յուսով, որ այստեղից նրա բարերար ազդեցութիւնը կը տարածվի և կեանքի միւս կողմերի վրա: Մենք այդ միջոցը գտնում ենք օրինաւոր դպրոցների մէջ—կանանց կրթութեան մէջ գիւղերում: Դպրոցը ինքը կախումն ունի կեանքի շատ պայմաններից, բայց մի և նոյն ժամանակ նա փոխադարձաբար ազդում է և այդ վերջիններիս վրա. ընդհանուր աղքատութեան ու կոպիտ սովորութիւնների ու նախապաշարմունքների մէջ դպրոցը դժւար կարող է հիմք դնել. բայց միայն թողէք նա զարգանայ և այն ժամանակ նիւթական բաւականութեան ու տարիներով արմատացած կոպիտ սովորութեանց փափկանալուն մեծ ծառայութիւն արած կը լինի նա:

Օրինաւոր դպրոցի բարձր նշանակութեան վրա այդքան խօսելով, շատերը մեզ կարող են անչափաւոր համարել սկզբից մինչև վերջը: Այդ ո՞ր դպրոցը կարող է պատրաստել խելօք կինտնտեսներ և լաւ դաստիարակներ. ո՞ր դպրոցը կարող է ճանաչեցնել կնոջ իր ֆիզիքական ու բարոյական պարտքերը իր երեխայոց վերաբերմամբ. ո՞ր դպրոցը միջոց կը տայ կնոջ գիտակցաբար վերաբերվել կեանքի երևոյթներին: Այն դպրոցները արդեօք, որոնք այժմ գոյութիւն ունեն գիւղերում. սկզբնական-ծխական դպրոցները արդեօք իրանց նեղ ու սահմանափակ պրոգրամմայով: Այո, միայն այդ տարրական-ծխական դպրոցներն, այդ ժողովրդական դպրոցները, որոնցով որ պարծում են այժմ Եւրօպայի միլլիօնաւոր ժողովուրդներ: Կարիք չը կայ, որ դոցա կուրսը անհուն է ու սահմանափակ պրոգրամման, որ այդ դպրոցները շատ փոքր տեղեկութիւններ են աւանդում. Բանը շատ տեղեկութիւնների ու շատ պրոգրամմայի մէջ չէ, այլ թէ ինչպէս պէտք է ուսուցիչը շարժէ աշակերտի միտքը, կանոնաւորէ այդ միտքը մտածողութեան համար, զարթեցնէ նրա մէջ սէր դէպի ուսումն, ազնուացնէ զգացմունքը, հեռացնէ նրան ամենօրեայ կեղտոտութիւններից և ցոյց տայ նրան բարոյական լաւ իդէալ: Եթէ այդ կատարած է—կատարած է ամենագլխաւորը, մնացածը ինքն իրան կը բարեկարգվի: Մտքի կանոնաւոր կազմակերպութեան համար կեանքը ինքը տալիս է շատ տեղեկութիւններ և միայն այդ մտքի համար կեանքի երևոյթները օրինակելի կարող են համարվել: Եթէ միտքը կարող է կանոնաւոր կերպով բացատրել ու հասկանալ կեանքի երևոյթները, այն ժամանակ մարդս կարող է ձեռք բերել կատարեալ փորձառութիւն. եթէ այդ չը կայ, այն ժամանակ կեանքը նրան ոչինչ չէ սովորեցնում, այլ տալիս է նրան մի քանի մանաւոր դասեր, որոնք պէտք են գալիս նրան միանգամ միայն: Տարրական դպրոցը ձգտում է վերևում ցոյց տուած զարգացման նպատակին, և այդ նպատակը իրագործվում է, եթէ գործը կանոնաւոր կերպով է յառաջ գնում: Իսկ եթէ նպատակը չէ իրագործվում, այդ դեռ չէ նշանակում, թէ հարկաւոր չեն ուրեմն օրինաւոր դպրոցներ և կանանց կրթութիւն. Այդ նշանակում է միայն, որ դպրոցը դեռ չէ բարեկարգված և այդ պատճառաւ նա չէ հասնում իր նպատակին: Եւ այդպէս մենք կարծում ենք, որ կանոնաւորված տարրական դպրոցը կարող է կնոջ տալ այն ամենը, ինչ որ մենք վերևում ասացինք—նա կարող է նրա մէջ զարգացնել այն համամարդկային բարոյական սկզբունքները, որոնք նա պիտի պատուաստէ իր երեխայոց:

Այդպէս ուրեմն կրթութիւնը գիւղական կեանքում, աղքատ ժողովրդի մէջ շատ ցանկալի է և կարևոր, ըստ որում առանց կանանց կրթութեան անկարելի է ձեռք բերել լաւ սովորութիւններ ընտանեկան ու հասարակական կեանքի մէջ, առանց կանանց կրթութեան անկարելի է մտածել և տղայոց կրթութեան վրա, և այն դպրոցները, որոնք այժմ գոյութիւն ունեն, առանց այդ պայմանի, գործում են միայն ով գիտէ հարիւրերրորդական մասը միայն նրա, ինչ որ նոքա կարող են գործել այդ՝ նոցա համար բարեյաջող պայմանների տակ: Գիւղական աղքատիկ դպրոցը կարող է այդ նպատակի համար շատ լաւ ծառայել, եթէ նա կանոնաւոր կերպով է կազմակերպված և կատարում է այն պարտաւորութիւնները, որն որ աւանդում է նրան ներկայ մանկավարժութիւնը: Վախենալ թէ կեանքի ծանր պայմանների տակ կը կորչէ այն, ինչ որ տալիս է դպրոցը—չը կայ ոչ մի ապացուցութիւն, ըստ որում զարգացած միտքը և ազնուացրած սիրտը իր զարգացման համար միշտ նիւթ կը գտնի. կրթութեամբ ազնուացրած վարքը ու բարքը մինչև անգամ անյաջող պայմանների տակ միշտ իրան մարդ կը ճանաչէ ու կը պահպանէ իր մարդկային արժանաւորութիւնը և վերջապէս կարելի՞ է միթէ դրանից երկիւղ կրել: Եթէ այդպէս դատելու լինենք, այն ժամանակ պիտի բոլորովին հեռու կենանք ամեն մի ինիցիատիւից և ենթարկվել ճակատագրի հարուածին:

Ի հարկէ, ամենից առաջ այստեղ ազդեցութիւն ունեն մեր ընդհանուր տնտեսական ու սօցիալական պատճառները, որոնք կարող են կամաց-կամաց հեռացվել, եթէ մեր տնտեսական և աշխարհահայեցողութեան պայմանները կը փոխվեն: Բայց պիտի նկատել, որ լուսաւորութիւնը փոփոխում է և ժողովրդի տնտեսական կեանքը ու նրա աշխարհահայեցողութիւնը: Պէտք չէ զանգատվել թէ՝ մեր գիւղացիք կանանց կրթութեան վրա սառնասրտութեամբ կը նային ու չեն հասկանայ նրա օգուտը ու նշանակութիւնը: Ցոյց տուէք գործով դպրոցի օգուտը ու նշանակութիւնը, կենտրոնացրէք ձեր հոգսերը դրա վրա և սառնասրտութիւնը ինքն իրան կը անցնէ—կերևայ այնպիսի՞ մի պահանջ, որ հազիւ թէ կարող էք բաւականութիւն տալ նրան:

Վերջացնելով յօդուածս պարտք եմ համարում ինձ միւս անգամ գրել, թէ ինչ տեսակ օրինաւոր դպրոցներ են հարկաւոր գիւղերում և ինչ տեսակ ուսուցիչներ:

Ա. Գալստեանց